ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/152

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչներ Ռ. Օհանյանի և Հ. Մանուկյանի (լիազորագիր՝ տրված 18.06.2021թ.),

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Ա. Թորոսյանի և Պ. Համբարյանի (լիազորագիր՝ տրված 25.06.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.06.2021թ. թիվ 26/26-1/9353-2021 գրությամբ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 04.06.2021թ. թիվ 08.1//12045-2021 գրության հիման վրա, 10.06.2021թ. թիվ 26/26-1/9353-2021 գրությամբ նախաձեռնել է «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին

(հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.06.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը Պատվիրատուի միջնորդությամբ 14.06.2021թ. թիվ ՍՑ-ՆԳ-2021/152 ծածկագրով «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունվել է վարույթ:

Ուսումնասիրելով նախաձեռնված ընթացակարգի հիմքում ընկած փաստերը գտնում ենք, որ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 09.03.2021թ. կնքվել է թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6 գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Ըստ Պայմանագրի ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկել ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործողությունների կատարումն այնպիսի ժամկետներում, որպեսզի 2021 թվականը ընդգրկող ժամանակահատվածից սկսած ապահովի տեխնիկական բնութագրով և ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը:

Պատվիրատուն առաջնորդվելով Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետով և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետը՝ միակողմանի լուծել է պայմանագիրը:

Այսինքն Պատվիրատուն լուծել է պայմանագիրը հիմք ընդունելով հետևյալը.

« - եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված

գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

- միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:»

Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ մասի՝

«պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Տվյալ դեպքում անհասկանալի և պարզման ենթակա է՝

թե կատարողի որ մատուցված ծառայության մասին է հիշատակվում Պատվիրատուի կողմից, որը չի համապատասխանել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

արդյոք Կատարողի կողմից եղել է Պայմանագրի այնպիսի խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի համար այնպիսի վնասի, որը զգալիորեն զրկել է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի՝

«Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:»

Քաղաքացիական օրենսգրքի 779-րդ մասի՝

«Կատարման անհնարինության դեպքում, որը ծագել է պատվիրատուի մեղքով, ծառայությունները վճարվում են լրիվ ծավալով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով:

Այն դեպքում, երբ կատարման անհնարինությունը ծագել է այնպիսի հանգամանքներից, որոնց համար կողմերից որևէ մեկը պատասխանատվություն չի կրում, պատվիրատուն

կատարողին հատուցում է նրա կատարած փաստացի ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով:»

տվյալ դեպքում պարզման ենթակա է նաև, թե ում մեղքով է իրականացվել պայմանագրով չհամապատասխանող ծառայությունների մատուցում:

Պատվիրատուի կողմից Պայմանագրի լուծման հիմքում դրվել է այն, որ վերջինիս կողմից 26.03.2021թ. թիվ 01//5896-2021 և 02.04.2021 թ. թիվ 01//6635-2021 գրություններով ներկայացված զգուշացումներից հետո միայն Կատարողի կողմից ՀՀ ԿԳԱՍ նախարարի վավերացմանը ներկայացվել հաստատված՝ նախարարության ներքին աուդիտի 2021-23 թվականների ռազմավարական և 2021 թվականի տարեկան ծրագրերը: Ընդ որում, վավերացման ներկայացված՝ հաստատված վերոնշյալ ծրագրերը, մինչև Կատարողի կողմից հաստատումը, չեն ներկայացվել ՀՀ ԿԳԱՍ նախարարի և նախարարության ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն ու հավանությանը, ինչպես սահմանված է Պայմանագրի թիվ 1 հավելվածով: Այդ ծրագրերը նաև էականորեն տարբերվել են նախարարության կողմից Կատարողին տրամադրած նույն ծրագրերից: Մասնավորապես, առանց հիմնավոր գնահատումների և քննարկումների, վավերացման ներկայացված վերոնշյալ տարեկան ծրագրում ներառվել են Պայմանագրով սահմանված թվաքանակից շուրջ 3 անգամ պակաս աուդիտի միավորներ (ՀՀ ԿԳԱՍ նախարարի և նախարարության ներքին աուդիտի կոմիտեի կողմից քննարկման արդյունքում հավանությանը արժանացած 41 միավորի փոխարեն՝ 14): Բացի այդ, մինչ այժմ չկատարված պարտավորություններից են նաև՝ կատարողի աշխատանքային ռեսուրսների առկայության երաշխավորության մասին գրավոր հավաստիացում և հայտարարություն ներկայացնելը, նախարարության ներքին աուդիտի միջավայրը գնահատելն ու փաստաթղթավորելը, նախարարության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները սահմանելը, ընթացիկ տարվա ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը կազմելը և ներկայացնելը, նախարարության ներքին աուդիտի կանոնակարգի վերաբերյալ կատարողի գրավոր կարծիքը ներկայացնելը, նախարարությունում Կատարողի առնվազն 1 աշխատակցի մշտական ներկայությունն ապահովելը: Այսինքն, ըստ էության, անցած ժամանակահատվածում, խախտելով պայմանագրային պարտավորությունները, Կատարողի թերացումների արդյունքում չի ապահովվել նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթների կատարումը:

Ծառայությունների ընդունման ընթացակարգը հստակ սահմանված է տեխնիկական առաջադրանքի 6-րդ բաժնով: Ծառայությունների մատուցման այլ պայմանները և ժամկետները հստակ սահմանված են ներքին աուդիտի օրենսդրությամբ և ներքին աուդիտի կանոնակարգով:

Մասնավորապես ըստ տեխնիկական առաջադրանքի՝ ծառայությունների կատարման հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ՝ մինչև հաջորդող առաջին ամսվա 15-րդ օրը: Հաշվետվությանը կից ներկայացվում է տվյալ ժամանակահատվածում մատուցված ծառայության բնույթը, բովանդակությունը և դրա փաստաթղթավորման արդյունքը, ինչպես նաև գրավոր հավաստում, որ ծառայությունները մատուցվել է 5-րդ բաժնի 2-րդ կետում նշված չափանիշներին բավարարող աշխատանքային ռեսուրսների կողմից:

Պատվիրատուի կողմից վերը նշված հաշվետվությունը հաստատվում կամ առարկություններով Կատարողին են վերադարձվում, Կոմիտեի կողմից դրա քննարկման արդյունքներով (գրավոր արձանագրվում է)՝ հաստատման, կամ մերժման եզրակացությամբ, որի վերաբերյալ Կատարողը գրավոր տեղեկացվում է գրավոր արձանագրության ամսաթվից հետո՝ հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում:

Կատարողի կողմից պատվիրատուին չի ներկայացվել այդպիսի հաշվետվություն, ըստ որի, Կոմիտեի կողմից քննարկման արդյունքներով գրավոր եզրակացությամբ մերժվել է, ինչի արդյունքում Պատվիրատուն լուծել է կողմերի միջև կնքված պայմանագիրը: Հաշվետվությունները ենթակա էր ներկայացման երեք ամիսը մեկ՝ մինչև հաջորդող առաջին ամսվա 15-րդ օրը՝ այսինքն տվյալ դեպքում պետք է ներկայացվեր մինչև հուլիսի 15-ը:

Տվյալ դեպքում պետք է նկատել նաև, որ Պատվիրատուի կողմից հիշատակվող աշխատանքային ռեսուրսների բավարարման փաստը հավաստող գրավոր հավաստումը պետք է ներկայացվեր Պատվիրատուին միայն այդ դեպքում՝ ծառայությունների մատուցման հաշվետվության հետ միաժամանակ:

Բացի այդ Քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի՝ քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ:

Նույն օրենսգրքի 447-րդ հոդվածի՝ Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից:

Պայմանագրով նախատեսված տեխնիկական առաջադրանքի 8-րդ բաժնի 4-րդ կետով հստակ եղել է սահմանված հետևյալը.

<< 4. Կատարողին կտրամադրվեն Կոմիտեի հետ քննարկված և Նախարարի կողմից վավերացված՝ Նախարարության ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան և 2021-23 թվականների ռազմավարական ծրագրերը:>>

Տվյալ պայմանագրի պայմանը մեկնաբանելիս ակնհայտ է, որ Նախարարության ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան և 2021-23 թվականների ռազմավարական ծրագրերի հետ կապված պետք է իրականացված լիներ 2 գործողություն՝ Կոմիտեի հետ քննարկում և Նախարարի կողմից վավերացում:

«Ներքին աուդիտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի՝ ռազմավարական և տարեկան ծրագրերը, դրանց փոփոխությունները հաստատում է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, և դրանք վավերացվում են կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ:

Այսինքն օրենքի տվյալ իրավանորմից ակնհայտ է, որ ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական և տարեկան ծրագրերի գործողության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է 2 վավերապայման՝ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի հաստատում և կազմակերպության ղեկավարի վավերացում:

Սակայն, Պատվիրատուի կողմից մշակված և Կատարողին ներկայացված ծրագրերում բացակայել է այդ վավերապայմանները, ինչը սահմանված է եղել կողմերի միջև կնքված պայմանագրով: Պայմանագրով սահմանվել է ոչ թե ներքին աուդիտի կողմից քննարկված և հավանության արժանացած ծրագրերի կատարողին տրամադրման պայման, այլ Կոմիտեի հետ քննարկված և Նախարարի կողմից վավերացված ծրագրի կատարողին տրամադրման պայման, ինչը ըստ էության Պատվիրատուի կողմից չի տրամադրվել:

Բացի այդ՝ հիշատակված օրենքի նույն հոդվածքով սահմանված է, որ ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի երեք տարվա ռազմավարական և տարեկան ծրագրերի հիման վրա, որոնք մշակում է ներքին աուդիտի ստորաբաժանումը:

Առկա տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 21-ի դրությամբ Նախարարությունը չի ունեցել ներքին աուդիտի ստորաբաժանում, հետևաբար

Նախարարության կողմից ներկայացված ծրագրերը չէր կարող մշակված լիներ ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից:

Ավելին՝ Ֆինանսների նախարարի 23.02.2012թ. թիվ 165-Ն հրամանի 10-րդ կետի՝ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը մասնակցում է ներքին աուդիտի կոմիտեի նիստերին քարտուղարի կարգավիճակով՝ առանց քվեարկելու իրավունքի:

Ուստի Պատվիրատուի կողմից գրությամբ հիշատակված «2020 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի արձանագրությունը» ծրագրերը ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից մշակված չլինելու և ստորաբաժանման ղեկավարի կողմից կոմիտեի նիստին քարտուղարի կարգավիճակով մասնակցություն չունենալով պայմանավորված այդպիսի քննարկված և հավանության արժանացած ծրագրերը չէր կարող համարվել որպես ընդունելի կատարողի համար՝ հաշվի առնելով տվյալ գործընթացը օրենսդրական կարգավորումները շրջանցումով իրականացված լինելը:

Միաժամանակ Նախարարության կողմից ներկայացված ծրագրերի նախագծերը կազմված չեն եղել իրավական պահանջների համատեքստում, ուստի ղեկավարվելով Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանի 80-րդ կետով /ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը վավերացվում է կազմակերպության ղեկավարի կողմից/ Կատարողի կողմից դրանք մշակվել և Նախարարին՝ որպես ի պաշտոնը ներքին աուդիտի կոմիտեի նախագահ, ներկայացվել է քննարկման և վավերացման:

Ինչ վերաբերվում է Պատվիրատու կազմակերպության նախարարին քննարկմանը ներկայացված ծրագրերի մշակմանը վերաբերվող որոշակի տեխնիկական դիտարկումներին, ապա նշենք, որ ծրագրերը ներկայացված են եղել քննարկման և միայն կոմիտեի նիստում կոմիտեի անդամների դիտողությունների և առաջարկությունների արդյունքում ընդունված որոշումների հիման վրա այն կարող էր լրամշակվել և ենթարկվել փոփոխությունների /հիմք՝ Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանի 138-րդ կետ/: Հետևաբար Կատարողը Նախարարին խնդրել է ներկայացված նախագծերը քննարկման առարկա դարձնել, որոնք, ի դեպ, ինչպես նշվեց, ըստ պայմանագրի, պետք է տրամադրվեին կատարողին Նախարարության կողմից, այսինքն Կատարողը Նախարարության ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան և 2021-23 թվականների ռազմավարական ծրագրերի նախագծերի ներկայացման պարտավորություններ ստանձնած չլինելով՝ կազմել և ներկայացրել է:

Կատարողի կողմից ներկայացված տարեկան ծրագիրը ամբողջությամբ բխել է կողմերի միջև կնքված Կատարողի ստանձնած պարտավորություններից: Պատվիրատուն Պայմանագրի լուծման հիմքում նաև նշել է, որ առանց հիմնավոր գնահատումների և քննարկումների, վավերացման ներկայացված տարեկան ծրագրում ներառվել են Պայմանագրով սահմանված թվաքանակից շուրջ 3 անգամ պակաս աուդիտի միավորներ, սակայն Պատվիրատուի տվյալ դատողությունը չի բխում կատարողի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունից:

Ինչպես արդեն նշվեց, ներքին աուդիտի օրենսդրության համաձայն ներքին աուդիտորը հաշվետու է ոչ թե Պատվիրատուի ղեկավարին, այլ տվյալ դեպքում նախարարին և ներքին աուդիտի կոմիտեի նախագահին:

Մատնանշված պայմանագրով ըստ Պատվիրատուի կողմից մատնանշված Կատարողի այլ պարտականությունների չկատարման մասով անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը.

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերությունը եղել է պատրաստակամ Նախարարության հետ կնքված պայմանագրի շրջանակներում իրականացնել պայմանագրով ստանձնած պարտավորությունների իր ամբողջ ծավալը, այդ թվում՝ ապահովել իր առնվազն մեկ աշխատակցի ներկայությունը Նախարարությունում, այդ մասին է վկայում նաև Կատարողի և Պատվիրատուի միջև գրագրությունների բովանդակությունը: Սակայն այդ պայմանը ինքնանպատակ և ձևական չի եղել սահմանված պայմանագրով, դրա մասին է վկայում նաև այն, որ այդ պայմանը չի սահմանվել Պայմանագրի՝ տեխնիկական առաջադրանքի կատարման, կատարողի պարտականությունների կատարման դրույթով: Այն անհրաժեշտ նախապայման է ներքին աուդիտի աշխատանքների արդյունավետ կատարումն ապահովելու համար: Ներքին աուդիտի համակարգի, ինչպես նաև պայմանագրի կատարման էական պայման է հանդիսանում աուդիտորական առաջադրանքների իրականացումը, որը Պատվիրատուի կողմից խոչընդոտվել է: Տվյալ իրավիճակում այդ պայմանի բավարարումը ստացվում է ինքնանպատակ, քանի որ չի իրականացվում պայմանագրային իրավահարաբերության հիմնական պայմանները:

Սակայն, ինչպես նշվեց, այնուամենայնիվ Կատարողը իր գրությամբ պատրաստակամություն է հայտնել իր առնվազն մեկ աշխատակցի ներկայությունը ապահովել Նախարարությունում՝ վերջինիս կողմից անհրաժեշտ պայմանների ապահովման դեպքում:

Բացի այդ մեկ աշխատակցի ներկայությունը չապահովելը չի կարող մեկնաբանվել որպես Պայմանագրի այնպիսի խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի համար այնպիսի վնասի, որը զգալիորեն զրկել է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս: Իսկ պայամանագրի կնքման ակնկալիք չի եղել մեկ հոգու ներկայությունը կատարողի կողմից նախարարությունում ապահովելը, որը ինչպես նշվեց տեխնիկական առաջադրանքով չի եղել սահմանված որպես կատարողի նկատմամբ իմպերատիվ պահանջ: Կատարողը չի հրաժարվել այդ պայմանը իրականացնելուց՝ Պատվիրատուի կողմից անհրաժեշտ հնարավորությունների տրամադրման դեպքում: Նախարարությունը հատուկ պահպանվող տարածք է և Կատարող կազմակերպության համար Պատվիրատուն հնարավորություն չի ընձեռնել Ընկերության աշխատակիցների ազատ մուտքը նախարարության մասնաշենք և անհրաժեշտ տեխնիկական և գույքային այլ միջոցներով:

Ինչ վերաբերվում է գրությամբ ներկայացված կատարողի այլ պարտականություններին, որոնք ըստ Նախարարության գնահատմամբ կատարողը չի իրականացրել, ապա նշենք, որ.

Կատարողի աշխատանքային ռեսուրսների առկայության երաշխավորության մասին գրավոր հավաստիացում և հայտարարություն տրամադրելու պայմանը նախատեսված է եղել տեխնիկական առաջադրանքով՝ մինչ պայմանագրի կնքումը: Տեխնիկական առաջադրանքի 7-րդ կետով հստակ սահմանվել է, որ աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար ընտրված մասնակիցը (և ոչ արդեն կատարողը) ներկայացնում է գրավոր հավաստիացում: Կատարողը որպես ընտրված մասնակից նախքան պայմանագրի կնքումը պատվիրատուին է տրամադրել վերջինիս կողմից պահանջված անհրաժեշտ փաստաթղթերը և արդեն հանդես է գալիս ոչ թե ընտրված մասնակից, այլ պայմանագրի կատարող և Պատվիրատուի կողմից այդպիսի հավաստիացման պահանջ կատարողին չի ներկայացվել: Սակայն հաշվի առնելով Նախարարի կողմից տվյալ հավաստիացման տրամադրման կարևորությունը գրությամբ ներկայացվել է նաև Կատարողի աշխատանքային ռեսուրսների առկայության երաշխավորության մասին գրավոր հավաստիացումը և հայտարարությունը:

Ինչ վերաբերվում է նախարարության ներքին աուդիտի միջավայրի գնահատելուն և փաստաթղթավորելուն, նախարարության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները սահմանելուն, ընթացիկ տարվա ներքին

աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը կազմելուն և ներկայացնելուն ապա նշենք, որ Կատարողի կողմից նախագծվել և առաջիկայում Նախարարության կոմիտեի քննարկմանը պետք է ներկայացվեր նաև Նախարարության ներքին աուդիտի կանոնակարգի նախագիծը, որով սահմանված կլինեն ներքին աուդիտի աշխատանքների մաս կազմող գործընթացների նկարագրությունները, պայմանները և պահանջները: Կանոնակարգի մասով պետք է նշել, որ Պայմանագրով սահմանված տեխնիկական առաջադրանքով Կատարողի համար որևէ ժամանակային սահմանափակում չի եղել ներկայացված:

Պայմանագրի 7.10-րդ կետով եղել է սահմանված, որ պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Պատվիրատուն չի ձեռնարկել միջոց ծագած վեճը լուծել բանակցությունների միջոցով, այն դեպքում, երբ տվյալ վեճը առաջացել է իր մեղքով: Կատարողը պարտավորություն չունենալով կազմել Նախարարության ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան և 2021-23 թվականների ռազմավարական ծրագրերի նախագծերը, կազմել և ներկայացրել է Նախարարությանը՝ ներքին աուդիտի կոմիտեի նախագահին՝ քննարկման, ինչով և փաստվում է, որ պատրաստակամություն է հայտնել ծագած վեճը լուծել բանակցությունների միջոցով:

Անհրաժեշտ է նշել, որ ներքին աուդիտի օրենսդրության համաձայն, ներքին աուդիտի ստորաբաժանումը ենթակա և հաշվետու է կազմակերպության ղեկավարին (տվյալ դեպքում նախարարին) և ներքին աուդիտի կոմիտեին:

Կողմերի միջև գրագրությունների բովանդակությունը վկայում է, որ Կատարողը Պատվիրատուի հետ փորձել է աշխատել կառուցողական մթնոլորտում, այն դեպքում, երբ վեճը առաջացել է պատվիրատուի կողմից և իր մեղքով:

Կատարողի կողմից պայմանագրի կատարման և ծառայությունների մատուցման շրջանակում թույլ չի տրվել պայմանագրի այնպիսի խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկել է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Պայմանագրի կատարման շրջանակում առկա չէ Կոմիտեի որևէ արձանագրություն և բացասական եզրակացություն, որը կվկայի Կատարողի կողմից մատուցված ծառայությունների ոչ պատշաճ լինելու մասին:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական վերահսկողական ծառայության և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին կողմ ներգրավելու մասին

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 15-րդ կետի՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և հասարակական կազմակերպությունների՝ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ ներգրավելու՝ Անձին ներկայացված գրավոր պահանջը ենթակա է բավարարման:

Ուստի, քանի որ սույն գործընթացի իրավաչափությունը Ընկերության համար կասկածելի է առնվազն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման տեսանկյունից, սույն հարցի լուծման արդարության և օբյեկտիվության ապահովման նպատակով խնդրում ենք ՀՀ պետական վերահսկողական ծառայության և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին ներգրավել որպես սույն հարցի քննարկման կողմ և ապահովել սույն հարցով քննարկման նիստին նրանց ներկայությունը»:

Ընկերությունը ի լրումն ներկայացված դիրքորոշման հայտնել է հետևյալը.

«Ի լրումն սույն ընթացակարգի վերաբերյալ մեր ներկայացված դիրքորոշման կարևոր ենք համարում հայտնել նաև հետևյալը.

Կառավարության 04.05.2017 թվականի 526-Ն որոշման համաձայն՝

Յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝

1) գնումները համակարգողը.

2) պատասխանատու ստորաբաժանումը.

3) գնահատող հանձնաժողովը:

7. Պատվիրատուի ղեկավարը՝

<<(…)

2) բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի՝

ա. կնքում է պայմանագիրը,

(…):>>

Պատասխանատու ստորաբաժանումը՝

<< (…)

2) հետևում է պայմանագրի կողմի (կապալառու, մատակարար և այլն)՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացին և դրա արդյունքներով պատվիրատուի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ.

3) ընդունում է պայմանագրի կատարման արդյունքը.

(…):»

Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:

Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վկայակոչված իրավանորմերի համադրման և վերլուծման արդյունքում պետք է եզրահանգել, որ Պատասխանատու ստորաբաժանմանը վերապահված միանձնյա իրավասությունն է բացասական եզրակացություն տալ կատարողի կողմից պայմանագրի շրջանակներում ոչ պատշաճ մատուցված ծառայության վերաբերյալ և դրա մասին գրավոր հայտնել պատվիրատուի ղեկավարին՝ առաջարկելով լուծումներ:

Պատասխանատու ստորաբաժանումը գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն ունեցող միակ այն սուբյեկտն է, որն իրավասու և կարողունակ է կատարողի մատուցված ծառայությունը բնութագրել տեխնիկական

առաջադրանքին չհամապատասխանող և առաջարկել Պատվիրատուի ղեկավարին լուծել պայմանագիրը:

Սակայն, սույն ընթացակարգի նյութերից պարզ է դառնում, որ Պատվիրատուի ղեկավարը որոշում է կայացրել լուծել կատարողի հետ կնքված պայմանագիրը՝ առանց պատասխանատու ստորաբաժանման բացասական կարծիքի տրամադրման և վերջինիս գրավոր ներկայացրած առաջարկի պայմաններում:

Նման պայմաններում հնարավոր է, որ Պատասխանատու ստորաբաժանումը ներկայացներ այլ եզրակացություն և գրավոր առաջարկ:

Պատվիրատուի ղեկավարը այն սուբյեկտը չէ, որն իրավասու է և կարողունակ պայմանագրի առարկան բնութագրել և մատուցված ծառայությունը որակել պայմանագրի տեխնիկական առաջադրանքին չհամապատասխանող, ինչը ապացուցվեց նաև ընթացակարգի քննության նիստով այն համատեքստում, որ պայմանագրի լուծման հիմքում դրված փաստերի մասով Պատվիրատուի ներկայացուցչի կողմից փաստացի միայն քննարկման առարկա էր դարձվել Կատարողի կողմից իր աշխատակցի ներկայությունը Նախարարությունում չապահովելը, ինչի վերաբերյալ կրկին անգամ հարկ ենք համարում նշել, որ Պայմանագրով տվյալ պահանջի կատարման մեխանիզմ և ժամկետ չի եղել սահմանված, Կատարողը չի հրաժարվել պայմանագրով սահմանված տվյալ պահանջը կատարելուց, նույնիսկ այն դեպքում, երբ ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագիրը քննարկման առարկա կոմիտեի նիստում չդարձվելով վերադարձվել է կատարողին՝ այդպիսով վերջինիս խոչընդոտելով պայմանագրի կատարումից: Վերջինիս մասին է վկայում Պատվիրատուի 04.05.2021 թվականի գրությունը, որով տեղեկացվել է կատարողին պայմանագրով տվյալ պահանջ նախատեսված լինելու մասին՝ չնշելով կատարողի կողմից այդ պահանջի կատարման մեխանիզմ և ժամկետ, կատարողին տվյալ գրությամբ նաև չնախազգուշացնելով պայմանագրի լուծման կամ առկա հակասությունների վերաբերյալ քննարկման ձևաչափով լուծելու պատրաստակամության մասին, այն դեպքում, երբ կատարողը պատասխան գրությամբ, նույնիսկ չենթադրելով Պատվիրատուի կողմից պայմանագրի լուծման պատրաստակամության մասին, ներկայացրել է անձանց ցանկը և Նախարարի գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, դիրքորոշումներ և լուծումներ /կից ներկայացվում է տվյալ գրագրության պատճենը/:

Հաշվի առնելով վերոգրյալը վերահաստատում ենք, որ Ձեր կողմից հարուցված սույն ընթացակարգը ենթակա է մերժման»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/152 ընթացակարգի շրջանակներում քննության նպատակով 21.06.2021թ. ժամը 09:35-ին և 25.06.2021թ. ժամը 10:33-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 16.06.2021թ. ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.06.2021թ. թիվ 08.1//12045-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 09.03.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկել ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործողությունների կատարումն այնպիսի ժամկետներում, որպեսզի 2021 թվականը ընդգրկող ժամանակահատվածից սկսած ապահովի տեխնիկական բնութագրով և ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը: Սակայն ընկերությունը խախտելով պայմանագրային պարտավորությունները, մինչ օրս չի ապահովվել նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթների կատարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, նախարարությունը, առաջնորդվելով Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետով և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետը՝ միակողմանի լուծել է 09.03.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6 գնման պայմանագիրը, ինչի մասին ծանուցումը 03.06.2021թ հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը ուղարկվել է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ստորև ներկայացնում եմ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները և համապատասխան հիմքերը՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/152 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 09:35-ին և 25.06.2021թ. ժամը 10:33-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

4. ՀՀ պետական վերահսկողության ծառայության ներկայացրած փաստերը, հիմնավորումները.

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 16.06.2021թ. ներկայացված միջնորդության հիման վրա ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը ՍՑ-ՆԳ-2021/152 ընթացակարգի քննության շրջանակներում ներգրավվել է որպես կողմ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը ՍՑ-ՆԳ-2021/152 ընթացակարգի քննության նպատակով 25.06.2021թ. ժամը 10:33-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Պայմանագրի ոչ մի կետում նշված չէ, որ դա ռազմավարական և տարեկան ծրագիր է, ընդամենը նշված է տեխնիկական առաջադրանք: Պայմանագրում նշված չէ նաև թե աուդիտ իրականացնող ընկերությունը ինչ միավորներ պետք է ենթարկի ներքին աուդիտի և ինչ ժամկետներում, ուստի պարտադրել կատարողին, օրինակ ծառայությունը մատուցել հունիս ամսին դա Պատվիրատուի կողմից սխալ է: Կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված տարեկան ռազմավարական ծրագիր Պայմանագրում առկա չէ, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարությունը և ՀՀ պետական վերահսկողության ծառայությունը բազմիցս նշել են, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր ներքին աուդիտի աշխատակիցները ազատվել են աշխատանքից, հետևաբար տարեկան ռազմավարական ծրագրերը որպես տեխնիկական բնութագիր ընթացիկ տարվա համար լինի ռազմավարական ծրագրի ընթացիկ տարին, այսինքն՝ եթե 2018թ. կազմվել է 2019-2021թթ. ռազմավարական ծրագիրը, 2021թ. ներքին աուդիտի տեխնիկական բնութագրում տեխնիկական առաջադրանք որպես այդպիսին լինի ռազմավարական ծրագրերի ընթացիկ տարին, այն է՝ 2021 թվականը: Տվյալ դեպքում Պայմանագրում նշված է 41

միավոր, սակայն այդ 41 միավորը պետք է կատարվի հունիս, օգոստոս թե մեկ այլ ամսին նշված չէ, մինչդեռ՝ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով Պատվիրատուն պետք է նշի, թե որ միավորը որ ժամանակահատվածում պետք է իրականացվի:

Այսպիսով՝ եթե Պայմանագրով լինեին հստակ ժամկետներ աուդիտի ենթակա միավորները աուդիտի ենթարկելու, ապա Պատվիրատուի հիմնավորումները ընդունելի կլինեին, մինչդեռ՝ որևէ գործողության կատարման ժամկետ չկա, ուստի դրանց բացակայության պայմաններում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը հիմնավոր չէ»:

5. ՍՑ-ՆԳ-2021/152 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/152 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Քրոու ընդ ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 09.03.2021թ. կնքվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6» ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ԿԳՄՍՆ աուդիտորական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «Աուդիտորական ծառայություններ»-ը պետք է իրականացվի 2021թ.՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում, մինչև 2021թ. դեկտեմբերի 25-ը:

2022թ.՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: 2023թ.՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրիրն ուժի ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4.«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին ուղղված 03.06.2021թ. թիվ 08.1/11944-2021 ծանուցմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

««ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 09.03.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկել ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործողությունների կատարումն այնպիսի ժամկետներում, որպեսզի 2021 թվականը ընդգրկող ժամանակահատվածից սկսած ապահովի տեխնիկական բնութագրով և ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը: Սակայն, մինչ օրս՝ նախարարության կողմից 26.03.2021թ թիվ 01/5896-2021 և 02.04.2021թ թիվ 01/6635-2021 գրություններով ներկայացված զգուշացումներից հետո միայն, Ձեր կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարի վավերացմանն է ներկայացվել հաստատված՝ նախարարության ներքին աուդիտի 2021-23 թվականների ռազմավարական և 2021 թվականի տարեկան ծրագրերը: Ընդ որում, վավերացման ներկայացված՝ հաստատված վերոնշյալ ծրագրերը, մինչև Ձեր կողմից հաստատումը, չեն ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ և նախարարության ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն ու հավանությանը, ինչպես սահմանված է վերոնշյալ Պայմանագրի թիվ 1 հավելվածով: Այդ ծրագրերը նաև էականորեն են նախարարության կողմից Ձեզ տրամադրած նույն ծրագրերից: Մասնավորապես, առանց հիմնավոր գնահատումների և քննարկումների, վավերացման ներկայացված վերոնշյալ տարեկան ծրագրում ներառվել են Պայմանագրով սահմանված թվաքանակից շուրջ 3 անգամ պակաս աուդիտի միավորներ (ՀՀ ԿԳՄՍ նախարարի և

նախարարության ներքին աուդիտի կոմիտեի կողմից քննարկման արդյունքում հավանությանը ար-անացած 41 միավորի փոխարեն՝ 14): Բացի այդ, մինչ այժմ չկատարված պարտավորություններից են նաև՝ կատարողի աշխատանքային ռեսուրսների առկայության երաշխավորության մասին գրավոր հավաստիացում և հայտարարություն ներկայացնելը, նախարարության ներքին աուդիտի միջավայրը գնահատելն ու փաստաթղթավորելը, նախարարության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները սահմանելը, ընթացիկ տարվա ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը կազմելը և ներկայացնելը, նախարարության ներքին աուդիտի կանոնակարգի վերաբերյալ կատարողի գրավոր կարծիքը ներկայացելը, նախարարությունում Ձեր առնվազն 1 աշխատակցի մշտական ներկայությունն ապահովելը: Այսինքն, ըստ էության, անցած ժամանակահատվածում, խախտելով պայմանագրային պարտավորությունները, Ձեր թերացումների արդյունքում չի ապահովվել նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթների կատարումը:

Ելնելով վերոգրյալից, նախարարությունը, առաջնորդվելով Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետով և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետը՝ միակողմանի լուծում է Ձեզ հետ 09.03.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6 գնման պայմանագիրը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 03.06.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

6. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2021թ. թիվ 26/26-1/9650-2021 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 04.06.2021թ. թիվ 08.1//12045-2021 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության ներկայացրած առարկությունները և կից փաստաթղթերը, ՀՀ պետական վերահսկողական

ծառայության ներկայացուցչի դիրքորոշումը, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***պատասխանատու է մեղքի առկայության դեպքում***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Պայմանագրի 2.13 ենթակետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսպես, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Քրոու ընդ ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 09.03.2021թ. կնքվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6» ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ԿԳՄՍՆ աուդիտորական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «Աուդիտորական ծառայություններ»-ը պետք է իրականացվի 2021թ.՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային

օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում, մինչև 2021թ. դեկտեմբերի 25-ը: 2022թ.՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: 2023թ.՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրիրն ուժի ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին ուղղված 03.06.2021թ. թիվ 08.1/11944-2021 ծանուցմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 09.03.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկել ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործողությունների կատարումն այնպիսի ժամկետներում, որպեսզի 2021 թվականը ընդգրկող ժամանակահատվածից սկսած ապահովի տեխնիկական բնութագրով և ներքին աուդիտի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը: Սակայն, մինչ օրս՝ նախարարության կողմից 26.03.2021թ թիվ 01/5896-2021 և 02.04.2021թ թիվ 01/6635-2021 գրություններով ներկայացված զգուշացումներից հետո միայն, Ձեր կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարի վավերացմանն է ներկայացվել հաստատված՝ նախարարության ներքին աուդիտի 2021-23 թվականների ռազմավարական և 2021 թվականի տարեկան ծրագրերը: Ընդ որում, վավերացման ներկայացված՝ հաստատված վերոնշյալ ծրագրերը, մինչև Ձեր կողմից հաստատումը, չեն ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ և նախարարության ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն ու հավանությանը, ինչպես սահմանված է վերոնշյալ Պայմանագրի թիվ 1 հավելվածով: Այդ ծրագրերը նաև էականորեն են նախարարության կողմից Ձեզ տրամադրած նույն ծրագրերից: Մասնավորապես, առանց հիմնավոր գնահատումների և քննարկումների, վավերացման

ներկայացված վերոնշյալ տարեկան ծրագրում ներառվել են Պայմանագրով սահմանված թվաքանակից շուրջ 3 անգամ պակաս աուդիտի միավորներ (ՀՀ ԿԳՄՍ նախարարի և նախարարության ներքին աուդիտի կոմիտեի կողմից քննարկման արդյունքում հավանությանը ար-անացած 41 միավորի փոխարեն՝ 14): Բացի այդ, մինչ այժմ չկատարված պարտավորություններից են նաև՝ կատարողի աշխատանքային ռեսուրսների առկայության երաշխավորության մասին գրավոր հավաստիացում և հայտարարություն ներկայացնելը, նախարարության ներքին աուդիտի միջավայրը գնահատելն ու փաստաթղթավորելը, նախարարության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները սահմանելը, ընթացիկ տարվա ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը կազմելը և ներկայացնելը, նախարարության ներքին աուդիտի կանոնակարգի վերաբերյալ կատարողի գրավոր կարծիքը ներկայացելը, նախարարությունում Ձեր առնվազն 1 աշխատակցի մշտական ներկայությունն ապահովելը: Այսինքն, ըստ էության, անցած ժամանակահատվածում, խախտելով պայմանագրային պարտավորությունները, Ձեր թերացումների արդյունքում չի ապահովվել նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթների կատարումը:

Ելնելով վերոգրյալից, նախարարությունը, առաջնորդվելով Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետով և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետը՝ միակողմանի լուծում է Ձեզ հետ 09.03.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6 գնման պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***<u>Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ</u>***: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Պայմանագրի 3.1, 3.2, 3.3 և 3.4 կետերի համաձայն՝

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման

արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Այսպիսով, վերը շարադրված կարգավորումների համաձայն, Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն, այսինքն մատուցած ծառայությունն ընդունվում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից Տեղեկագրում հրապարակված Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցման համաձայն՝ 09.03.2021թ. կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-21/6 գնման պայմանագիրը Պատվիրատուն միակողմանի լուծել է հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետը:

Այն է՝ Պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետի համաձայն՝ ***<u>Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝</u>***

<u>ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին</u>, մինչդեռ գործում առկա փաստաթղթերի

ուսումնասիրության արդյունքում, արձանագրում եմ, որ առկա չէ Կատարողի կողմից Պատվիրատուին ծառայությունը հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3), ինչպես նաև «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից մատուցված ծառայությունը Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով Պատվիրատուի կողմից կազմված բացասական եզրակացություն, հետևաբար վերոնշված փաստաթղթերի բացակայության պայմաններում հնարավոր չէ արձանագրել Պայմանագրի էական խախտման փաստը և որպես արդյունք Պայմանագիրը 2.1.3 կետի ա) ենթակետի հիմքով լուծելու իրավաչափությունը:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունը չկատարելու փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.06.2021թ. թիվ 26/26-1/9353-2021 գրությամբ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**